

**ՀԱՎԵԼՅԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏ (SSI)
Դիմողների իրավունքներն ու պարտականությունները**

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Դուք իրավունք ունեք.

- Եկամուտ ստանալու համար անվճար դիմել:
- Օգնություն ստանալ սոցիալական ապահովագրության գրասենյակից՝ դիմումի ձևի լրացման և անհրաժեշտ փաստաթղթերի ձեռք բերման հարցերում:
- Սոցիալական ապահովագրությանը դիմելու կամ գրասենյակ այցելելու ժամանակ Ձեզ հետ օգնող անձ ներկայացնել:
- Փաստաբան կամ Ձեր կողմից ընտրած անձ ունենալ, որը կհանդիսանա Ձեր ներկայացուցիչը:
- Խնդրել Ձեր անձի վերաբերյալ բոլոր արձանագրություններն ու տեղեկությունները:
- Նամակ ձեռք բերել, որում կհաստատվի Ձեր նպաստի տեսակն ու չափը:
- Իրավունք ունեք բողոքարկելու, եթե գտնում եք, որ սոցիալական ապահովագրության գրասենյակը ճիշտ չի սահմանել Ձեր նպաստի չափն ու տեսակը:
- Եթե անզվերեն լավ չեք խոսում, կարող եք օգտվել թարգմանչի անվճար ծառայությունից:
- Սոցիալական ապահովագրությանը դիմել բժշկական արձանագրություններ ձեռք բերելու հարցում:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետք է մեզ տեղյակ պահեք.

- Հասցեի փոփոխության կամ տեղափոխման դեպքում:
- Ընտանիքի անդամի տեղափոխման կամ ընտանիքում նոր անդամ ունենալու դեպքում:
- Եկամտի փոփոխման դեպքում:
- Ձեր ունեցվածքի կամ սեփականության փոփոխման դեպքում:
- Եթե հարազատներից կամ ընկերներից ֆինանսական օգնություն եք ստանում կամ էլ եթե որևէ մեկը օգնում է առօրյա ծախսերի հարցում:
- Եթե Ձեր կողակիցը կամ ընտանիքի անդամներից մեկը մահանա:
- Ամուսնության կամ ամուսնալուծության դեպքում:
- Անվանափոխման դեպքում:
- Եթե ստանում եք այլ տեսակի նպաստներ կամ վճարումներ:
- Եթե մտել եք կամ դուրս եք գրվել այնպիսի հաստատություններից, ինչպիսիք են՝ հիվանդանոց, ծերանոց կամ բանտ :
- Միացյալ Նահանգներից դուրս գալու և վերադառնալու դեպքում:
- Եթե հովանավոր ունեցող գաղթական եք և Ձեր հովանավորի եկամուտը փոխվել է:
- Եթե ստանում եք կուրության կամ հաշմանդամության նպաստ և այդ ընթացքում Ձեր վիճակը բարելավվել է:
- Եթե տեսակցություն ունեք և չեք կարող գրասենյակ ներկայանալ:

ՀԻՇԵՑՈՒՄՆԵՐ

- Եթե ի վիճակի չեք դեկլարելու Ձեր ֆինանսները, պետք է Սոցիալական ապահովագրությանը տեղեկացնեք:
- Գործերը կառավարելու անհրաժեշտության դեպքում գրասենյակը կտրամադրի թարգմանչական անվճար ծառայություններ: Նախապես պետք է Սոցիալական ապահովագրության գրասենյակին տեղյակ պահեք, որպեսզի տեսակցության ժամանակ Ձեր լեզվով խոսող անձով ապահովեն:
- Գուք և Ձեր ներկայացուցիչը պետք է ներկայացնեք ճշգրիտ տեղեկություններ: Ոչ ճշգրիտ տեղեկություններ միտումնավոր ներկայացնելը անօրինական է:
- Հաշմանդամության նպաստներ ստանալու ժամանակ պետք է տեղյակ պահեք Ձեր ստացած բոլոր բժշկական ծառայությունների աղբյուրների մասին:
- Սոցիալական գրասենյակ նպաստի վերաբերյալ կարող եք բողոքարկել 60 օրվա ընթացքում:
- Ձեր մահվան փաստը պետք է գրասենյակին տեղյակ պահվի՝ Ձեր ընտանիքի անդամի կամ բարեկամի կողմից:

Նշում. Այս համառոտ տեղեկագիրը ընդհանուր պատկերացում է հավելյան ապահովագրության իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ: Այն չի ներառում օրենքի բոլոր կետերը: Եթե ունեք կոնկրետ հարցեր Ձեր կարգավիճակի վերաբերյալ, խնդրում ենք դիմել Սոցիալական ապահովագրության գրասենյակ:

Լրացուցիչ տեղեկությունների համար

Խնդրում ենք այցելել կամ գրել Սոցիալական ապահովագրության գրասենյակ, կամ զանգահարել **1-800-772-1213** անվճար հեռախոսահամարով: Գրասենյակի ներկայացուցչին կարող եք զանգահարել առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 7-ի ընթացքում: Չանգահարելու ժամանակ ապահովագրության անձնակազմի համարը պատրաստ պահեք:

Ձայնագրված կամ ավտոմատ տեղեկություններ կարող եք ձեռք բերել 24 ժամվա ընթացքում՝ շաբաթ, կիրակի և արձակուրդները ներառյալ:

Եթե օգտվում եք դժվար լսող մարդկանց համար հատուկ հեռախոսից, ապա կարող եք զանգահարել առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 7-ի ընթացքում **1-800-352-0778** անվճար հեռախոսահամարով:

Թե անվճար հեռախոսահամարով, և թե տեղական գրասենյակ դիմած հեռախոսազանգերը մնում են գաղտնի: Մեր նպատակն է ցուցաբերել հարգալից և ճշգրիտ ծառայություն: Այդ պատճառով էլ միշտ ունենք երկրորդ աշխատակից, որը հսկում է, որոշ ստացված և դուրս եկած հեռախոսազանգերը:

Սոցիալական ապահովագրության վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում կարող եք մաս այցելել ինտերնետի մեր հասցեները՝ <http://www.ssa.gov>, <http://www.ssa.gov/multilanguage>